պետ Գառնակերեանց՝ ս. Աթոռոյս Տնտեսական կառավարութեան ժողովոյ անդամ նշանակեցան. Նու պ. Մախտանդ Փարսադանեանց՝ յիշեալ ժողովոյ գործակատար կարգեցաւ.

Փետր. — Գեր. Անդրէաս Նախկոպոս տէր Անդրէասեան Կ. Պօլսեցի Շամախւոյ վիճակին Հոգևոր Տեսուչ նշանակեցաւ.

,, — Քանաքեռ գեղջ Հայոց ծխական դպրոցի վերատեսուչ Փարսադանեանց պ. Մախտանդի բարենպատակ ջանքով՝ և Երևանայ փոխ—թեմակալ Արժ. Մեսրովպ վարդապետի յորդորանօք՝ յիշեալ գեղջ Հայոց ժողովուրդն սիրայօժար և միաբան ըղձանօք՝ իւրեանց գեղջ գինեվաճառութեան և մսավաճառութեան կրպակաց արդիւնքը, ինչպէս նաև արդէն Նիկիձեցական դրամագլխոց տոկոսիքը և այգեաց ու պարտիզաց արդիւնքը ընծայած են յօգուտ իւրեանց ծխական հոգևոր դըպրոցին. Որուն նաև Ներքին և արտաքին պիտոյից կառավարութեան և յառաջադէմ զարգացման համար երկու Հոգաբարձու ընտրելով պ. Յարութիւն Ազվազեանցը և պ. Սողոմոն Յակովբեանցը՝ առաջարկած են Մեծ. Կաթողիկոսի, որ Նորին ս. Մեծափառութիւնն ևս մեծամ. սիրով բարեհաճեցաւ օրհնութեան կոնդակաւ հաստատել, և իւր գոհունակութիւնը յայտնել Քանաքեռ գեղջ Հայ ժողովրդեան այսպիսի ուսումնասէր առատաձեռնութեանց համար.

Այսպիսի բարենպատակ առատաձեռնութեանց և ուսումնասէր մանաւանդ թէ Ազգասէր ջանից մասին որքան որ սիրելի է մեր ԱՐԱՐԱՏայ՝ զգալ բերկրապատար ուրախութիւն և մեծ շնորհակալութիւն, այնքան ևս անուշ քաղցր է յուսալ՝ որ յիշեալ գեղջ ակուաթիւ՝ և մչ—հարուստ Ազգայնոց եռանդը բարի օրինակ կը հանդիսանայ մեր համայն սիրելի Ազգայնոց.

---

Կ. Պօլսոյ Ազգային Լրագրաց հրատարակութիւններից կ՚իմանանք թէ՝ Գեր. Տ. Պատրիարքն Պօլսոյ՝ Ազգային կամքը հրաժարուած լինելով, մինչև վերաբրագրեալ Ազգ. Սահմանադրութեան վերահաստատութիւն, և նոր Պատրիարքի ընտրութիւն՝ Պատրիարքական Տեղապահ կարգուած է Գեր. Արիստակէս ս. Արքեպիսկոպոս.

ԱՐԱՐԱՏը յիշեալ գեր. Արքեպիսկոպոսին նոր պաշտօնը շնորհաւորելով, և կարողութիւն և զօրութիւն բարեմաղթելով յերկնից, միանգամայն կը բաղձայ որ Նորին գերապատուութիւնը կարող հանդիսանայ մեր սիրելի Ազգայնոյ բարենպատակ կամքը և փափաքը նախամեծարելով, նոյն վիճակը լաւ ընթացից վերածել, և Ազգի և ս. Եկեղեցւոյ օգտաւէտ և անհրաժեշտ ծառայութեամբք իւր պարտաւորութեանց ճիշդ կատարման փառքը վայելելու արժանանայ.

---